ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/43-1·264-20

ք. Երևան «11» 08 2020թ.

ՀՀ էկոնոմիկային նախարարությունը ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար **Ա. Խաչատրյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Սմարթլայն» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Տ.Ղարիբյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով <**գրենական պիտույքների և գրասենյակային նյութեր (105811001)**> (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից

ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **3762805** (երեք միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր հինգ) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի

համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 110
Հ/ՀՀ՝ 900011018695,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ՝ 1150009537660100
գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 01548908
ՀՎՀՀ՝ 02698604	
_____ **Ա.Խաչատրյան**	_____ **Տ.Ղարիբյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 1
«11» 08 2020թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/43-1-264-20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	22811150/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Նոթատետրեր **Legal Pad Paper**	Al Passo General Trading CO.LLC	Նոթատետր A4 ձևաչափի (210x297մմ), 50էջ, տողանի, առանձնացվող էջերով, գույնը՝ սպիտակ/դեղին:	հատ	250	70000	280	Մ.Մկրտչյան 5	230	III-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	50	III-րդ եռամսյակ
3	22851200/2 /էկոնոմիկայի նախարարություն/	Թղթապանակներ **Folder**	Al Passo General Trading CO.LLC	Թղթապանակ ֆայլերով, A4 ֆորմատի (210x297), 30թ., 15մմ, խտությունը՝ 500 մկր, գույնը՝ կապույտ:	հատ	350	87500	250	Մ.Մկրտչյան 5	250	III-րդ եռամսյակ
6	30171100/2 /էկոնոմիկայի նախարարություն/	Ամսաթիվ կամ հերթական համար նշող մեքենաներ **Shiny**	Al Passo General Trading CO.LLC	Ամսաթիվ տպող սարք Մոդել՝ E-9510 10 նիշ. Թվային բարձրությունը -5 մմ Ներառյալ կապույտ փոխվող բարձիկ	հատ	17000	17000	1	Կառավարական տուն 3	1	III-րդ եռամսյակ
7	30171100/3 /էկոնոմիկայի նախարարություն/	Ամսաթիվ կամ հերթական համար նշող մեքենաներ **Shiny**	Al Passo General Trading CO.LLC	Ամսաթիվ տպող սարք Մոդել: E-913 Տպման չափը: 50 x 30 մմ Ներառյալ կապույտ փոխվող բարձիկ	հատ	11000	11000	1	Կառավարական տուն 3	1	III-րդ եռամսյակ

8	30192100/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ռետին հասարակ Eraser	Al Passo General Trading CO.LLC	Ռետինե ջնջոց, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար, գույնը՝ սպիտակ:	հատ	24,966	7490	300	Մ.Մկրտ-չյան 5	300	III-րդ եռամսյակ
10	30192121/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գնդիկավոր Cello Finegrip	Al Passo General Trading CO.LLC	Գրիչ գնդիկավոր, 0.5մմ ծայրով, ռետինե բռնակով, բարձր որակի, գույնը՝ կապույտ:	հատ	50	50000	1000	Մ.Մկրտ-չյան 5	1000	III-րդ եռամսյակ
11	30192121/2 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գնդիկավոր Cello Finegrip	Al Passo General Trading CO.LLC	Գրիչ գնդիկավոր, 0.5մմ ծայրով, ռետինե բռնակով, բարձր որակի, գույնը՝ կարմիր,	հատ	50	2500	50	Մ.Մկրտ-չյան 5	50	III-րդ եռամսյակ
12	30192121/3 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գնդիկավոր Cello Finegrip	Al Passo General Trading CO.LLC	Գրիչ գնդիկավոր, 0.5մմ ծայրով, ռետինե բռնակով, բարձր որակի, գույնը՝ սև,:	հատ	50	2500	50	Մ.Մկրտ-չյան 5	50	III-րդ եռամսյակ
14	30192125/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Մարկերներ SKYGLORY	Al Passo General Trading CO.LLC	CD/DVD մարկերներ, գույնը պատվիրատուի ընտրությամբ,	հատ	80	1600	20	Մ.Մկրտ-չյան 5	20	III-րդ եռամսյակ
15	30192128/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գելային Uniball/Schneider	Uniball LLC	Գրիչ գելային, 1մմ ծայրով, գույնը՝ կապույտ, բարձր որակի:	հատ	700	49000	70	Մ.Մկրտ-չյան 5	70	III-րդ եռամսյակ
17	30192130/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Մատիտներ SKYGLORY	Al Passo General Trading CO.LLC	Մատիտ, HB, ռետինով, սրած	հատ	25	10000	400	Մ.Մկրտ-չյան 5	400	III-րդ եռամսյակ
19	30192151/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կնիք, ավտոմատ, ուղղանկյուն Shiny	Al Passo General Trading CO.LLC	Կնիքի սարք, ուղղանկյուն, մոդել -S-830 կամ համարժեքը, տպման չափը - 75 x 38 մմ. Ներառյալ կապույտ փոխվող բարձիկ	հատ	4800	33600	7	Կառավա-րական տուն 3	7	III-րդ եռամսյակ
20	30192160/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Շտրիխներ CIVORS	Al Passo General Trading CO.LLC	Ուղղիչ գրիչ, 10մլ,	հատ	160	32000	200	Մ.Մկրտ-չյան 5	100	IV-րդ եռամսյակ
									Կառավա-րական տուն 3	100	IV-րդ եռամսյակ
25	30197100/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչի մետաղալարե կապեր, մեծ Steples	Al Passo General Trading CO.LLC	Կարիչի մետաղալարե կապեր 23/20	տուփ	300	3000	10	Կառավա-րական տուն 3	10	III-րդ եռամսյակ
26	30197111/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր Steples	Al Passo General Trading CO.LLC	Կարիչի մետաղալարե կապեր 10	տուփ	40	8000	200	Կառավա-րական տուն 3	200	III-րդ եռամսյակ

27	30197112/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչի մետաղալարե կապեր, միջին Steples	Al Passo General Trading CO.LLC	Կարիչի մետաղալարե կապեր 24/6	տուփ	55	20625	375	Մ.Մկրտչյան 5	100	III-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	275	III-րդ եռամսյակ
30	30197233/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Թղթապանակ, թելով, թղթյա	Անդրանիկ Խաչատրյան Ա/Ձ	Երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ^3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ:	հատ	65	97500	1500	Կառավարական տուն 3	1500	III-րդ եռամսյակ
31	30197234/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Թղթապանակ, կոշտ կազմով Alba rado	Al Passo General Trading CO.LLC	Թղթապանակ ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի (210x297մմ) ձևաչափի թղթերի համար, ներսի մակերեսը լամինապատված, 4-8սմ հաստությամբ, գույնը՝ սև, կարմիր, կապույտ, պատվիրատուի ընտրությամբ,	հատ	450	148500	330	Մ.Մկրտչյան 5	300	III-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	30	III-րդ եռամսյակ
32	30197321/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչ, մինչև 20 թերթի համար Kangaro	Al Passo General Trading CO.LLC	Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, ծակման խորությունը 64մմ բարձր որակի,	հատ	540	94500	175	Մ.Մկրտչյան 5	150	III-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	25	III-րդ եռամսյակ
33	30197322/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչ, 20-50 թերթի համար Kangaro	Al Passo General Trading CO.LLC	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, ծակման խորությունը 110մմ, բարձր որակի,	հատ	900	18000	20	Մ.Մկրտչյան 5	20	III-րդ եռամսյակ
34	30197323/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչ, 50-ից ավելի թերթի համար Stepler	Al Passo General Trading CO.LLC	Գրասենյակային կարիչ 50-ից ավելի թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, ծակման խորությունը 65մմ, բարձր որակի,	հատ	3000	99000	33	Մ.Մկրտչյան 5	30	III-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	3	III-րդ եռամսյակ
35	30197332/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Դակիչ միջին Kangaro	Al Passo General Trading CO.LLC	Դակիչ գրասենյակային, մետաղական, 30 թերթ դակելու համար,:	հատ	1250	37500	30	Մ.Մկրտչյան 5	30	III-րդ եռամսյակ
36	30197340/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Ապակարիչ Remover	Al Passo General Trading CO.LLC	Գրասենյակային ապակարիչ N10, N24/6 և N26/6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար,	հատ	130	2600	20	Մ.Մկրտչյան 5	20	III-րդ եռամսյակ

37	30197622/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Թուղթ A4 ֆորմատի /21x29.7/ «Pioneer»	Navigator company	Թուղթ պատճենահանման A4 չափսի (210x297)մմ, թղթի զանգվածը՝ 80 գ, ներկայացուցչական աշխատանքների համար, A դասի, ուլտրա սպիտակ, սպիտակությունը 171CIE, առավել հարթ մակերեսով, փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ,	կգ	760	2280000	3000	Մ.Մկրտչյան 5	2000	IV-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	1000	IV-րդ եռամսյակ
43	30199232/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար Evelope	Al Passo General Trading CO.LLC	Ծրար՝ A4 (210x297մմ) ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ² մակերեսը՝ 100գ զանգվածով, N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:	հատ	26	104000	4000	Մ.Մկրտչյան 5	2000	III-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	2000	III-րդ եռամսյակ
44	30199238/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Ծրար, մեծ, A6 ձևաչափի համար Evelope	Al Passo General Trading CO.LLC	Ծրար՝ A6 (114x162մմ) ձևաչափի, 1 մ² մակերեսը՝ 80 գ զանգվածով, N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:	հատ	6.995	13990	2000	Կառավարական տուն 3	2000	III-րդ եռամսյակ
45	30199290/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Ծրար (Eurostandard) Evelope	Al Passo General Trading CO.LLC	Ծրար, 115x225մմ ձևաչափի, 90% սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100գ զանգվածով, N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող):	հատ	9	9000	1000	Կառավարական տուն 3	1000	III-րդ եռամսյակ
47	30199420/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով Memo Cube	Al Passo General Trading CO.LLC	Թերթիկներ նշումների համար, պլաստիկ տուփով սոսնձվածքով 90մմx90մմ, 700էջ, 80գր. գունավոր,	հատ	950	76000	80	Մ.Մկրտչյան 5	30	III-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	50	III-րդ եռամսյակ
54	33141118/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Անձեռոցիկներ Lamirel	Al Passo General Trading CO.LLC	Համակարգչային անձեռոցիկներ, տուփի մեջ 100 հատ,:	հատ	650	91000	140	Մ.Մկրտչյան 5	100	IV-րդ եռամսյակ
									Կառավարական տուն 3	40	IV-րդ եռամսյակ
56	39263410/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Ամրակ, մետաղյա, փոքր Paper clip	Al Passo General Trading CO.LLC	Փոքր, գրասենյակային ամրակներ, մետաղական, 28մմ չափի, տուփի մեջ 100 հատ: Centrum կամ համարժեքը:	տուփ	70	3500	50	Կառավարական տուն 3	50	III-րդ եռամսյակ
57	39263420/1 /Էկոնոմիկայի նախարարություն/	Ամրակ մետաղյա, մեծ Paper Clip	Al Passo General Trading CO.LLC	Մեծ, գրասենյակային ամրակներ, մետաղական, 50 մմ չափի, տուփի մեջ 100 հատ, Centrum կամ համարժեքը:	տուփ	175	3500	20	Կառավարական տուն 3	20	III-րդ եռամսյակ
60	39263530/1 /Էկոնոմիկայի	Սեղմակ, մեծ Binder Clips	Al Passo General	Մետաղական սեղմակ զսպանակով, պլաստմասսե գլխիկով 51 մմ չափերի,	հատ	40	38400	960	Մ.Մկրտչյան 5	480	III-րդ եռամսյակ

	նախարարություն/		Trading CO.LLC	Centrum կամ համարժեքը:					Կառավա- րական տուն 3	480	III-րդ եռամսյակ
61	39292110/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրատախտակ-Ներ White board	Al Passo General Trading CO.LLC	Գրատախտակ մարկերային՝ հենակալով, չափսերը՝ 70x100սմ, ալյումինե շրջանակով, բարձրությունը կարգավորելի:	հատ	24000	240000	10	Մ.Մկրտ-չյան 5	10	IV-րդ եռամսյակ
ԸՆԴԱՄԵՆԸ						-	**3762805**	-	-	-	-

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան* **2020թ. դեկտեմբերի 25-ը:**

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

ԳՆՈՐԴ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/ՀՀ՝ 900011018695,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

_____ **Ա.Խաչատրյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150009537660100
ՀՎՀՀ՝ 01548908

_____ **Տ.Ղարիբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 11 » 08 2020 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/43-1 *264-20 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																	
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դաս. (CPV)	անվանումը	Տնտես. դաս.	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22811150/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Նոթատետրեր	4261	-	-	-	-	-	-	-	70000	70000	70000	70000	70000	70000
3	22851200/2 /էկոնոմիկայի նախարարություն/	Թղթապանակ-ներ	4261	-	-	-	-	-	-	-	87500	87500	87500	87500	87500	87500
6	30171100/2 /էկոնոմիկայի նախարարություն/	Ամսաթիվ կամ հերթական համար նշող մեքենաներ	4261	-	-	-	-	-	-	-	17000	17000	17000	17000	17000	17000
7	30171100/3 /էկոնոմիկայի նախարարություն/	Ամսաթիվ կամ հերթական համար նշող մեքենաներ	4261	-	-	-	-	-	-	-	11000	11000	11000	11000	11000	11000
8	30192100/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ռետին հասարակ	4261	-	-	-	-	-	-	-	7490	7490	7490	7490	7490	7490
10	30192121/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գնդիկավոր	4261	-	-	-	-	-	-	-	50000	50000	50000	50000	50000	50000

11	30192121/2 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գնդիկավոր	4261	-	-	-	-	-	-	-	2500	2500	2500	2500	2500	2500
12	30192121/3 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գնդիկավոր	4261	-	-	-	-	-	-	-	2500	2500	2500	2500	2500	2500
14	30192125/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Մարկերներ	4261	-	-	-	-	-	-	-	1600	1600	1600	1600	1600	1600
15	30192128/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրիչ գելային	4261	-	-	-	-	-	-	-	49000	49000	49000	49000	49000	49000
17	30192130/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Մատիտներ	4261	-	-	-	-	-	-	-	10000	10000	10000	10000	10000	10000
19	30192151/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կնիք, ավտոմատ, ուղղանկյուն	4261	-	-	-	-	-	-	-	33600	33600	33600	33600	33600	33600
20	30192160/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Շտրիխներ	4261	-	-	-	-	-	-	-	-	-	32000	32000	32000	32000
25	30197100/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչի մետաղալարե կապեր, մեծ	4261	-	-	-	-	-	-	-	3000	3000	3000	3000	3000	3000
26	30197111/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	4261	-	-	-	-	-	-	-	8000	8000	8000	8000	8000	8000
27	30197112/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	4261	-	-	-	-	-	-	-	20625	20625	20625	20625	20625	20625
30	30197233/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Թղթապանակ, թելով, թղթյա	4261	-	-	-	-	-	-	-	97500	97500	97500	97500	97500	97500
31	30197234/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Թղթապանակ, կոշտ կազմով	4261	-	-	-	-	-	-	-	148500	148500	148500	148500	148500	148500
32	30197321/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչ, մինչև 20 թերթի համար	4261	-	-	-	-	-	-	-	94500	94500	94500	94500	94500	94500
33	30197322/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչ, 20-50 թերթի համար	4261	-	-	-	-	-	-	-	18000	18000	18000	18000	18000	18000
34	30197323/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Կարիչ, 50-ից ավելի թերթի համար	4261	-	-	-	-	-	-	-	99000	99000	99000	99000	99000	99000
35	30197332/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Դակիչ միջին	4261	-	-	-	-	-	-	-	37500	37500	37500	37500	37500	37500
36	30197340/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ապակարիչ	4261	-	-	-	-	-	-	-	2600	2600	2600	2600	2600	2600
37	30197622/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Թուղթ A4 ֆորմատի /21x29.7/	4261	-	-	-	-	-	-	-	-	-	2280000	2280000	2280000	2280000
43	30199232/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	4261	-	-	-	-	-	-	-	104000	104000	104000	104000	104000	104000
44	30199238/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ծրար, մեծ, A6 ձևաչափի համար	4261	-	-	-	-	-	-	-	13990	13990	13990	13990	13990	13990

45	30199290/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ծրար (Eurostandard)	4261	-	-	-	-	-	-	-	9000	9000	9000	9000	9000	9000
47	30199420/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով	4261	-	-	-	-	-	-	-	76000	76000	76000	76000	76000	76000
54	33141118/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Անձեռոցիկներ	4261	-	-	-	-	-	-	-	-	-	91000	91000	91000	91000
56	39263410/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ամրակ, մետաղյա, փոքր	4261	-	-	-	-	-	-	-	3500	3500	3500	3500	3500	3500
57	39263420/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Ամրակ մետաղյա, մեծ	4261	-	-	-	-	-	-	-	3500	3500	3500	3500	3500	3500
60	39263530/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Սեղմակ, մեծ	4261	-	-	-	-	-	-	-	38400	38400	38400	38400	38400	38400
61	39292110/1 /էկոնոմիկայի նախարարություն/	Գրատախտակ-ներ	4261	-	-	-	-	-	-	-	-	-	240000	240000	240000	240000
ԸՆԴԱՄԵՆԸ				**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**1119805**	**1119805**	**3762805**	**3762805**	**3762805**	**3762805**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/ՀՀ՝ 900011018695,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

_____ **Ա.Խաչատրյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150009537660100
ՀՎՀՀ՝ 01548908

_____ **Տ.Ղարիբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 11 » 08 2020թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/43-1-264-20 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
____________________________	____________________________
____________________________	____________________________
գտնվելու վայրը ______________	գտնվելու վայրը ______________
հհ _________________________	հհ _________________________
հվհհ _______________________	հվհհ _______________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «   » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «   » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
____________________________	____________________________
ստորագրություն	ստորագրություն
____________________________	____________________________
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«11» 08 2020թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-20/43-1 *204-20 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն